*Հաստատված է*
*Տնօրինության 18.02.2025թ․-ի*
*Թիվ DEC 12-14 արձանագրությամբ*
*Ուժի մեջ է 18.02.2025թ․-ից*

| Հիփոթեքային վարկեր «Սպայական և Ավագ ենթասպայական կազմերի զինծառայողների բնակապահովման»պետական աջակցության ծրագրով | | |
|---|---|---|
| Վարկի նպատակը | Բնակարանի կամ բնակելի անշարժ գույքի ձեռքբերում (Երկրորդային շուկա, ոչ անմիջապես կառուցապատողից)/ և կառուցապատում | Բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերում անմիջապես կառուցապատողից |
| Ծրագրի շահառու | ՀՀ ՊՆ համակարգի սպայական ու ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների և ՀՀ ԱԱԾ ու ՊՊԾ մարմինների ծառայողներ | |
| Վարկառու | 21 տարին լրացած ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձ, վարկի մարման ժամկետին տարիքը չպետք է գերազանցի 70 տարին*<br><br>*Ծրագրի շրջանակում վարկառուին (համավարկառուին) հիփոթեքային վարկ տրամադրվում է մեկ անգամ: Ամուսիններ հանդիսացող զինծառայողների դեպքում` հիփոթեքային վարկ տրամադրվում է միայն ամուսիններից մեկին: | |
| Համավարկառու | Ծրագրով սահմանված շահառու զինծառայողի ընտանիքի անդամներ**<br><br>**զինծառայողի ընտանիքի անդամ` զինծառայողի ամուսինը, զավակը, ծնողը, զինծառայողի և (կամ) նրա ամուսնու քույրը և (կամ) եղբայրը, զինծառայողի ամուսնու ծնողը: | |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ | |
| Վարկի գումար | 4,000,000-25,650,000 ՀՀ դրամ | |
| Սուբսիդավորվող կանխավճար | 2,500,000 ՀՀ դրամ | |
| Վարկի տրամադրման եղանակ | Անկանխիկ`<br>• ձեռքբերման դեպքում` միանվագ,<br>• կառուցապատման դեպքում` միանվագ կամ փուլային | |
| Կառուցապատման դեպքում վարկի տրամադրման փուլեր | **Առանձին փուլերով տրամադրման դեպքում`**<br>- վերջին մասնաբաժնով պետք է ֆինանսավորվի շինարարական աշխատանքների վերջին փուլը և չպետք է գերազանցի վարկի գումարի 20%-ը,<br>- կառուցապատումը պետք է ավարտին հասցվի վարկի վերջին մասնաբաժնի տրամադրումից 1 տարի հետո,<br>**Միանվագ եղանակով տրամադրման դեպքում`**<br>- գումարն ամբողջությամբ սառեցվում է հաճախորդի բանկային հաշվին և բաց է թողնվում նվազագույնը 3 փուլով,<br>- յուրաքանչյուր փուլով բաց թողնված գումարի չափը չպետք է գերազանցի վարկի գումարի 40%-ը, իսկ վերջին փուլի գումարը չի կարող գերազանցել վարկի գումարի 20%-ը,<br>- կառուցապատումը պետք է ավարտին հասցվի վարկի տրամադրումից` առավելագույնը 2 տարի ժամկետում (անկախ կառուցապատման թույլտվությամբ ավելի երկար ժամկետ սահմանված լինելու փաստից): | |

| | | |
|---|---|---|
| **Վարկի ժամկետ** | 120-240 ամիս | |
| **Ծրագիր** | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» | «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» |
| **Տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/,**<br>*5% սուբսիդավորվում է Պետության կողմից* | 12,5% | 10,5% |
| **Տարեկան փաստացի տոկոսադրույք** | 7,82%-9,72% | 5,67%-7,29% |
| **Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ** | Անուիտետ<br>Ամսական մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ | |
| **Գրավի առարկա** | • Ձեռք բերվող անշարժ գույքը,<br>• Անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ բնակելի անշարժ գույք:<br>• Կառուցապատման դեպքում հողամասը/կիսակառույցը որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը***: | • Ձեռքբերվող անշարժ գույք/գնման իրավունք: Գնման իրավունքի գրավադրման դեպքում կառուցապատողի հատուկ հաշվին փոխանցված վարկի գումարը ամբողջությամբ հանդիսանում է գրավի առարկա<br>• Անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ բնակելի անշարժ գույք: |
| **Վարկ/Գրավ (LTV) առավելագույն արժեք** | • 70%,<br>• կամ մինչև 90%, եթե բացի ձեռքբերվող անշարժ գույքից/գրավի իրավունքից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք կամ հաճախորդը իրականացնում է կանխավճարի ապահովագրություն՝ սահմանված նվազագույն կանխավճարի և իրականացված կանխավճարի տարբերության չափով | 90% |
| | Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի/գնման իրավունքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը | |
| **Գրավի գնահատում** | Անշարժ գույքը/գնման իրավունք գնահատվում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից: | |
| | Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների ցանկ | |
| **Կանխավճար** | Ձեռք բերվող անշարժ գույքի արժեքի առնվազն 30%-ի չափով:<br><br>Լրացուցիչ գույքի գրավադրման կամ հիփոթեքային պարտավորության ապահովագրության դեպքում՝ սկսած 10%-ից | Ձեռք բերվող անշարժ գույքի/գնման իրավունք արժեքի առնվազն 10%-ի չափով |
| **Ապահովագրություն** | Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից՝<br>• Գրավադրված գույքի ապահովագրություն<br>• Վարկառուի և համավարկառու/ներ/ի (առկայության դեպքում)՝ դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրություն:<br>• Կանխավճարի ապահովագրություն<br><br>Ապահովագրության ծախսերը իրականացվում են Բանկի կողմից, բացառությամբ կանխավճարի ապահովագրությունից | |

| | | |
|---|---|---|
| | ! Ապահովագրությունն իրականացվում է վարկի մնացորդի չափով հօգուտ Բանկի Վարկի գործողության ողջ ընթացքում | |
| Եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (ԸՊԵ կամ OTI) | մինչև 45% | մինչև 45%<br><br>PTI (Մ/Ե) ՝35% |
| Վարկառու/Համավարկառու վարկային պատմության ներկայացվող պահանջ | •Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին վարկառուի/համավարկառուի և վարկառուի գործող վարկային պարտավորությունները /վարկ, երաշխավորություն/ պետք է լինեն ստանդարտ և չպետք է լինեն ժամկետանց,<br>•Վերջին 12 ամիսների (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի գումարային քանակը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը | •Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին վարկառուի/համավարկառուի և վարկառուի ամուսնու գործող վարկային պարտավորությունները /վարկ, երաշխավորություն/ պետք է լինեն ստանդարտ և չպետք է լինեն ժամկետանց,<br>•Վերջին 12 ամիսների վարկառուի և ամուսնու բոլոր (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի գումարային քանակը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը: |
| | Եթե վարկառուի մեկ վարկի գծով չվճարված պարտավորության չափը չի գերազանցում 1,000/մեկ հազար/ ՀՀդրամը, ապա տվյալ վարկը ժամկետանց չի համարվում: | |
| Վարկը վերաֆինանսավորման ներկայացնելու առավելագույն ժամկետ | Վարկի տրամադրումից (փուլային տարբերակի դեպքում վարկի վերջին մասնաբաժնի տրամադրումից) 90 օրացույցային օրվա ընթացքում | Վարկի տրամադրումից 30 օրվա ընթացքում |
| Վարկի հայտի ուսումնասիրության վճար | Չի սահմանվում | |
| Վարկի տրամադրման միանվագ վճար | Չի պահանջվում | |
| Ժամկետանց մայր գումարի տույժ | 0,1% օրական | |
| Ժամկետանց տոկոսագումարի տույժ | 0,13% օրական | |
| Վարկի վաղաժամկետ մարում | • Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու վարկի ամբողջական կամ մասնակի մարում<br>• Վարկի վաղաժամկետ մարման տույժ առկա չէ | |
| Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով | - սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,<br>-իրավունքի պետական գրանցման վճար՝ 27,000 – 53,000 ՀՀ դրամ,<br>-նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ,<br>- գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:<br>Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել: | |

| | |
|---|---|
| Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են՝ | ·Կայուն եկամտի աղբյուր (ներառյալ եկամուտի երկրորդային աղբյուրները, ընդ որում երկրորդային եկամուտներ ունենալու դեպքում Վարկառուն հնարավորինս պետք է հիմնավորի դրանք համապատասխան փաստաթղթերով),<br>· դրական կամ չեզոք վարկային պատմություն,<br>· գրավի առարկայի համապատասխանություն Բանկի կողմից ընդունելի չափանիշներին,<br>·արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր: |
| Վարկը մերժելու գործոններն են | ·Բացասական վարկային պատմություն<br>·Անբավարար եկամուտ<br>·հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ,<br>·վարկառուն տրամադրել է ոչ արժանահավատ տեղեկատվություն:<br>· գրավի առարկայի համապատասխանություն Բանկի կողմից ընդունելի չափանիշներին:<br>· Անշարժ գույքի գնորդն ու վաճառողը միևնույն ընտանիքի անդամներ են |
| Ծրագրին վերաբերող այլ մանրամասների հղումներ | ·ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1091-Ն որոշում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149509<br>·«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ կողմից սահմանված «Մատչելի բնակարան զինծառայողին» ծրագրի վերաֆինանսավորման մանրամասներ՝ http://www.hfy.am/am/HFY_Affordable_housing_for_Mil..html<br>·«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից «Զինծառայողների պետական աջակցության» ծրագիր https://nmc.am/hy/loan-products/state-program-military-personnel<br>·«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ կողմից սահմանված «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման կարգի» http://www.hfyouth.am/files/Mil._Mortgage_16.06.2023_17A.pdf<br>·«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման կարգի»https://admin.nmc.am/storage/files/1/uploads/rules-regulations/Ref%20karg%20hipoteq_12.22.pdf |

! Սույն պայմաններով չկարգավորվող դեպքերը կարգավորվում են ՍՊԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՎԱԳ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ պայմաններով և դրույթներով

*** Կառուցապատման դեպքում Ծրագիրը գործում է զինծառայողի անվամբ սեփականության (համատեղ կամ բաժնային սեփականության) իրավունքով գրանցված տնամերձ կամ բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տուն կառուցելու շինարարական թույլտվության առկայության դեպքում (կառուցումը կարող է իրականացվել իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողի կողմից):

## Ծանոթություն

Նախքան պայմանագրի կնքումը Բանկը վարկառուին և համավարկառուին կտրամադրի վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են վարկառուին տրամադրվելիք վարկի էական պայմանները
Հաճախորդին տրամադրվում է պայմանագրի առաջարկը յոթ օր առաջ և տրամադրվում է նաև յոթ օր մտածելու ժամանակ:

1.Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա, իսկ նահանջ տարվա դեպքում 366 օրվա հաշվարկից:

2.Գրավի և իրավունքի պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման:

3.Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Ջվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:

4. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում 3-5 աշխատանքային օրվա ընթացքում և վարկի տրամադրման վերաբերյալ որոշման վավերականություն՝ մինչև 30 օրացուցային օր:

5. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

6. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱև ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

7. Երաշխավորն իրավունք ունի.

• Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:

• Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

• Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող Այլ ծառայությունների սակագների:

8. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

9.Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս զրկվի իր սեփական գույքից:

10. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

11.ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ։ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ։ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ։

12. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ։ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ www.fastbank.am։

13. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ, ԿԱՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅԼ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ։ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է։ ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ։ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ԳՐԱՎՈՐ ԴԻՄԵԼ ԲԱՆԿԻՆ ՁԵՐ ԵՎ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԿԻՐԱՌՎԻ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ 30 ՕՐ ՀԵՏՈ։

14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է։

15. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԵԴԻՏԱՌՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԶՐԿՎԵԼ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ, ԵԹԵ ՉԿԱՏԱՐԻ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:**